

«Իրավական ամփոփագրեր» շարք



Խոշտանգումները կանխելու իրավական երաշխիքները

Ազատագրկվածների՝ փաստաբան ունենալու իրավունքը

Մարտ 2010

Ներածություն

Խոշտանգումները և այլ դաժան, կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը գրեթե բոլոր դեպքերում տեղի են ունենում գաղտնի: Իրավաբանների, ինչպես նաև բժիշկների ներկայությունը և ընկերների կամ ընտանիքի անդամների հետ կապը ստեղծում է ավելի բաց միջավայր, որն օգնում է կանխելու խոշտանգումները և այլ դաժան գործողությունները: Արտաքին աշխարհից կտրված և գաղտնի կալանավայրերը ստեղծում են մարդու իրավունքների խախտումների անպատժելիության մթնոլորտ, և կարող են նույնիսկ խոշտանգումներ կամ վատ վերաբերմունք պարունակել հենց իրենց մեջ: Խոշտանգումներից և այլ դաժան վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունքը այն հիմարար բանն է, որից ոչ մի շեղում չի թույլատրվում¹:

Այս ամփոփագիրը նպատակ ունի ուրվագծելու օրենքի ներկա վիճակը ազատությունից զրկվելուց անմիջապես հետո իրավական օգնությանը² դիմելու՝ որպես երաշխիք խոշտանգումների եւ այլ դաժանությունների դեմ:

¹ Տես միջազգային Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը, հոդվածներ 4 եւ 7 - ում, ինչպես նաև ՄԱԿ - ի կոնվենցիան խոշտանգումների եւ այլ դաժան,անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին հոդվածներ 2 - րդ եւ 16.

² Այս փաստաթղթի համախոսումն ոչ մի տարբերություն չկա իրավախորհրդատուի,իրավաբանների և օրենքի ներկայացուցիչների մեջ:

Փաստաբան ունենալու իրավունքը կալանավորների համար ոչ միայն նրա համար է, որ նախապատրաստեն քրեական գործերով պաշտպանության, այլև անկախ ներկայությունն ապահովելու կալանքի տակ պահվելու և հարցաքննության ժամանակ (անկախ նրանից կապված է դա քրեական հետապնդման հետ, թե ոչ): Իրավաբանի ներկայությունը օգնում է ապահովել, որ կալանավորների³ անվտանգությունը եւ արժանապատվությունը հարգվեն, և որ

իշխանությունները չգերազանցեն իրենց լիազորությունները: Եթե քրեական գործը ընթացքի մեջ է, իրավաբանը կարող է նաև գնահատել ոստիկանության գործողությունների համապատասխանությունը արդար դատաքննության պահանջներին (և ահրաժեշտության դեպքում միջամտի):

ՄԱԿ - ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ կոնվենցիայի 2 և 16 թղ հոդվածները (UNCAT) պահանջում են, որ պետությունները արդյունավետ միջոցներ ձեռնարկեն կանխելու խոշտանգումները եւ այլ դաժան, կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը (կամ պատիժը): Լավ սահմանված կանխարգելիչ վերահսկողական մարմինների փորձը, ինչպիսիք են խոշտանգումների դեմ եվրոպական կոմիտեն (CPT), ցույց է տալիս, որ երաշխիքների համար օրենսդրական փոփոխություններ անելը, ինչպես օրինակ իրավաբան ունենալու իրավունքը, ամենալավ տարբերակն է պետությունների համար, որպեսզի վերջիններս կատարեն իրենց պարտականությունները և արդյունավետ գործողություններ ձեռնարկեն ՄԱԿ –ի պայմանագրային մարմինները, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնաժողովը (HRC) և Խոշտանգումների դեմ կոմիտեն (CAT) նույնպես ընդունել են այս երաշխիքը՝ որպես կարևորագույնը՝ կանխելու խոշտանգումները եւ մարդու հիմնարար իրավունքների խախտումները:⁴

Որպես ամփոփում՝ պետությունը պարտավորվում է երաշխիքներ հաստատել ազատագրկվածների համար՝ օրինակ, իրավաբան ունենալու իրավունքը, որը նկարագրված է այս ամփոփագրում, եթե դա համապատասխանում է ՄԱԿ - ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ կոնվենցիայի 2 և 16 թղ հոդվածների պահանջներին:

Այս փաստաթուղթը բաժանված է մասերի, որոնք ուսումնասիրում են իրավաբանների ծառայություններից օգտվելու իրավունքի տարբեր ասպեկտներ: Առաջինը, ինչպես է այն պաշտպանում ազատագրկվածներին? Երկրորդ, ինչ մենք նկատի ունենք, ասելով «փաստաբան ունենալ»- արդյոք փաստաբանի միայն ներկայությունը բավարար է ոստիկանությունում? Երրորդը-ժամանակը. ինչու պետք է ապահովել փաստաբանի ներկայությունը որքան հնարավոր է շուտ?

³ For the purposes of this paper, the term “detainee” should be understood to include any person deprived of personal liberty except as a result of conviction for an offence.

⁴ Տես մարդու իրավունքների կոմիտեի գլխավոր մեկնաբանությունը²⁰՝ մարտի 10, 1992, at §11 և խոշտանգումների դեմ կոմիտեն.գլխավոր մեկնաբանությունը 2 հունվարի 24 2008, at §13. The International Convention for the Protection of All Persons from Enforced Disappearance, which is not yet in force at the time of writing, also provides for this safeguard in article 17(2)(d). Տես: <http://www2.ohchr.org/english/law/disappearance-convention.htm>

Չորրորդ, կարող են օրինական սահմանափակումներ լինել այս օրենքի վերաբերյալ՝ անվտանգության նկատառումներից ելնելով? Հինգերորդը՝ որ երկրներում են իրավաբանների ծառայությունները օրենսդրորեն ամրագրված?

I. Ի՞նչպես է փաստաբանի ծառայություններից օգտվելը պաշտպանում մարդու իրավունքները

Փաստաբանի ներկայությունը ունի բազմաթիվ նպատակներ, այդ թվում՝

- Կալանավորների և իշխանությունների միջև եղած անհավասարության ուղղումը (մասնավորապես օրենքի հանդեպ եղած գիտելիքների առումով)
- Խոշտանգումները եւ այլ դաժան վերաբերմունքները կանխելը
- հնարավորություն անդրադառնալ կամայական կամ անհարկի արդարացված կալանքին
- Հարցազրույցների այլընտրանքային գրանցում ապահովելու հնարավորություն, հավաքված ապացույցների ամբողջականությունը ապահովելու համար

Փորձից ելնելով, ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխելու հարցերով հատուկ զեկուցողը կանխարգելիչ գործողությունների մասին հանդես է եկել հետևյալ առաջարկություններով Մարդու իրավունքների հանձնաժողովին ուղղված իր՝ 2002 թվականի դեկտեմբերի 17-ի զեկույցում:

Խոշտանգումների առավել հաճախ կատարվում են արտաքին աշխարհից կտրված կալանավայրերում: Նման կալանքը պետք է համարվի անօրինական, և կալանավորված անձինք պետք է ազատ արձակվեն անհապաղ: [Բոլոր համապատասխան] տեղեկությունները պետք է մանրակրկիտ արձանագրվեն: Իրավաբանների դերի մասին Հիմնարար Սկզբունքների համաձայն, ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձինք պետք է տեղեկացվեն իրենց՝ իրենց կողմից ընտրված կամ պետության կողմից նշանակած փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքի մասին, որը կարող է տրամադրել արդյունավետ իրավաբանական օգնություն: Անվտանգության աշխատակիցները, ովքեր չեն հարգում այս դրույթները, պետք է հեռացվեն:⁵

ՄԱԿ - ի Խոշտանգումների դեմ կոմիտեն (CAT) նույնպես հրապարակել է բազմաթիվ Եզրափակիչ դիտարկումներ, այդ թվում, օրինակ, Չինաստանի 4րդ պարբերական զեկույցի վերաբերյալ, որտեղ հանձնաժողովը նշել է, որ «մտահոգված է դատապարտյալների իրավական երաշխիքների բացակայությամբ այդ թվում... իրավաբանների ծառայություններից օգտվելու իրավունքի սահմանափակմամբ⁶»: Նմանապես, իր՝ Ինդոնեզիայի 2001թ-ի զեկույցի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումներում մեջբերել է որպես մտահոգություն «ազատագրվածների իրավունքների ապահովման համապատասխան

⁵ E/CN.4/2003/68, at § 26(g), available at: http://ap.ohchr.org/documents/alldocs.aspx?doc_id=3360. In the remainder of this paragraph, the Special Rapporteur goes on to discuss other safeguards (including medical examinations and prompt appearance before a judicial authority).

⁶ See Concluding Observations on China of 12 December 2008, CAT/C/CHN/CO/4, at §11.

երաշխիքների բացակայություն, ներառյալ մերձավոր ազգականի կամ երրորդ անձի, բժշկական ծառայությունից կամ իրենց ընտրությամբ իրավաբանի ծառայությունից օգտվելու իրավունքը^{7»} Խոշտանգումների դեմ կոմիտեն նաև քննադատել է (ի թիվս այլոց) Հոլանդիային⁸, Իսպանիային⁹, Ադրբեջանին¹⁰, Վրաստանին¹¹, Էստոնիային¹², Լատվիային¹³, Մոլդովային¹⁴, Չեխիային¹⁵, Սլովակիային¹⁶, Թուրքիային¹⁷ եւ Լիբիային¹⁸ այդ իրավունքը ազատագրվածներին չտրամադրելու համար: Լավ փորձի օրինակներ կարելի է գտնել ստորև բերված բաժին 5-ում:

ՄԱԿ - ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ենթահանձնաժողովը (SPT) ներկայացրել է իրավաբանական օգնությունը ստանալու իրավունքի դրական կողմը:

Կանխարգելիչ տեսանկյունից փաստաբանի իրավունք ունենալը կարևոր երաշխիք է վատ վերաբերմունքը կանխելու համար, որն ավելի լայն հասկացություն է, քան իրավաբանական պաշտպանություն իրականացնելը: Իրավաբանի ներկա գտնվելը հարցաքննության ընթացքում ոչ միայն կարող է կանխել բռնությունը կամ այլ չարաշահումներ, այլև կարող է օգնել ոստիկաններին այն դեպքերում, երբ նրանք ենթարկվում են վատ վերաբերմունք դրսևորելու անհիմն մեղադրանքների: Բացի այդ, փաստաբանը այն անձն է, ով կարող է օգնել ազատագրվածներին իրացնել իրենց իրավունքները, այդ թվում լուծելու բողոքները քննելու մեխանիզմների հետ կապված խնդիրները:¹⁹

Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի Հոդված 14-րդը, որը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին, նեկայացնում է համապատասխան մասում, որը քրեական դատավարության համատեքստում իր կողմից ընտրված փաստաբանի հետ շփվելու իրավունքը՝ նվազագույն երաշխիք է: Մի շարք իշխանություններում վերջին երկու տասնամյակներում մշակված²⁰ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացատրում է, որ փաստաբանի ներկա գտնվելը դատավարության ընթացքում անհրաժեշտ է արդար դատավարության համար: Փաստաբանի բացակայությամբ վկայությունը ավելի քիչ բավարար հիմք է մեղադրանքի համար: Փաստաբանի ներկայությունը կամ բացակայությունը կարող է որոշիչ դեր խաղալ քրեական գործընթացում: Լեբեդեվն ընդդեմ Ռուսաստանի գործում²¹, դատարանը Մարդու

⁷ CAT A/57/44 (2002) at § 44(e) (emphasis added)

⁸ CAT C/NET/CO/4 (2007) at § 6

⁹ CAT A/58/44 (2003) at § 62

¹⁰ CAT A/58/44 (2003) at § 88(g)

¹¹ CAT A/56/44 (2001) at § 81(e)

¹² CAT A/58/44 (2003) at § 49(d)

¹³ CAT C/CR/31/3 (2003) at § 6(h) – in Latvia’s case the Committee observed that, even when legislation provided for a right of access to counsel, it was not guaranteed in practice.

¹⁴ CAT A/58/44 (2003) at § 138(b)

¹⁵ CAT C/CR/32/2 (2004) at §§ 5(b) and 6(d)

¹⁶ CAT A/56/44 (2001) at § 104(g)

¹⁷ CAT A/46/46 (1991) at § 121(c)

¹⁸ A/54/44 of (1999) at § 4(a)

¹⁹ Report on the Visit of the Subcommittee on Prevention of Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment to the Maldives, (CAT/OP/MDV/1, 26 February 2009), at § 62.

²⁰ See eg *Murray v UK* (Application 41/1994) and *Öcalan v Turkey* (Application 46221/99). This line of authority was followed in numerous cases in 2009 – see further section 4 below.

²¹ Application 4493/04

իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5 – րդ (3) հոդվածի խախտում էր գտել, որը նախատեսում է անհապաղորեն ապահովել դատավորի ներկայություն, որպեսզի անձի կալանքը իրավական համարվի: Չնայած նրան, որ հինգերորդ հոդվածում պարզորոշ նշված չէ իրավական աջակցություն ունենալու իրավունքը, խախտում էր համարվում պրն. Լեբեդեվի փաստաբանի բացակայության նախնական լուսմների ժամանակ²²: 2008 թվականին Սալդուզը ընդդեմ Թուրքիայի²³ գործում դատարանը որոշեց, որ արդար դատաքննության իրավունքը համաձայն 6րդ հոդվածի չի կարող համարվել գործնական և արդյունավետ (ի տարբերություն տեսականի)²⁴ առանց փաստաբանի ներկայության առաջին լուսմների ժամանակ:

Տարածաշրջանային մարմինները եկել են նման եզրահանգումների: Օրինակ, Ամերիկյան Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույցում 1983 թվականին Նիկարագուայի փոքրամասնությունների իրավիճակի մասին ասվում է, որ փաստաբանի ներկայությունը կարևոր երաշխիք է համարվում այն բանի համար, որ մեղադրյալը հարկադրված չլինի ինքն իր դեմ ցուցմունք տալու և չենթարկվի տանջանքների:²⁵ 1986-ի Սալվադորի վերաբերյալ եզրակացություններում հանձնաժողովը նշել է, որ իրավական աջակցություն ունենալու իրավունքը պետք է կիրառվի մեղադրյալի հարցաքննման առաջին պահից:²⁶

Բացի այդ, փաստաբանի ներկայությունը կարևոր երաշխիք է անօրինության և կամայական կալանքի դեմ, որոնք արգելված են Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9րդ հոդվածով: Ազատագրվումը հակասում է 9րդ հոդվածին ամեն անգամ, երբ գործող իշխանություններն ի վիճակի չեն գործել ներքին կանոնադրությունների հաապատասխան, կամ երբ հանցագործությունը ուղղակի համարվում է անհիմն, քմահաճ և ենթադրյալ²⁷: Կալանքը, որը կարող էր իրավական լինել, նույնպես կարող է կամայական դառնալ, եթե այն ողջամտորեն արդարացված չէ հանգամանքներով²⁸: Կամայականության հնարավորությունները բարձր են, երբ մեղադրյալը չունի փաստաբանի հնարավորություն կամ ողջամտություն իր կալանավորման հանդեպ: Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների այս համատեքստում մարդու իրավունքների կոմիտեն մեկնաբանել է իրավաբանների անհրաժեշտությունը եզրափակիչ դիտարկումների ժամանակ հետևյալ երկրների վերաբերյալ՝ Քուվեյթ²⁹, Սիրիայի Արաբական Հանրապետություն³⁰, Վիետնամ³¹, Մարոկկո³² եւ Բելգիա³³:

²² As above – see in particular the Chamber judgment of 25 October 2007, at §§ 84-91.

²³ Application 36391/02 of 8 August 2002 – see in particular § 55 of the Grand Chamber judgment of 27 November 2008. Salduz was followed in *Adalmış & Kiliç v Turkey* (Application 25301/04, Chamber judgment of 1 December 2009).

²⁴ This formulation derives from an earlier judgment: *Imbrioscia v Switzerland* (Application 13972/88, judgment of 24 November 1993, see § 38).

²⁵ From *Report on the Situation of Human Rights of a Segment of the Nicaraguan Population of Miskito Origin*, OEA/Ser.L/V/II.62, doc.10, rev. 3, 1983, at 100, as cited in Foley, *Combating Torture: A Manual for Judges & Prosecutors*, available at: http://www.essex.ac.uk/combatingtorturehandbook/manual/2_content.htm, at § 2.30

²⁶ Annual Report of the Inter-American Commission, 1985-1986, OEA/Ser.L/V/II.68, doc. 8 rev. 1, 1986, p. 154, El Salvador, as also cited in Foley (above), at § 2.30.

²⁷ See Nowak, *CCPR Commentary*, Engel 2005 (2nd Ed), at pp 223-5

²⁸ As above, at p 226

²⁹ CCPR A/55/40 (2000) at § 472

³⁰ CCPR A/56/40 (2001) at § 81(14)

Ամփոփելով՝ փաստաբանի ներկայությունը օգնում է ապահովել օրենքի պահպանումը (ազգային և միջազգային) պետության տնօրինության տակ գտնվողների հանդեպ:

II. Ե՞րբ է օրենքը ուժի մեջ մտնում

Ազատագրվումից անմիջապես հետո անձանց ինքնավարությունը սահմանափակվում է և նրանք իշխանությունների կամքին են հանձնված լինում: Արդյունքում առաջացած ուժերի անհավասարությունը ստեղծում է իրական վտանգ, որ մարդու իրավունքները չեն հարգվի³⁴: Սա հատկապես ճիշտ է, եթե մեղադրյալը կասկածվում է հանցագործության մեջ, և իշխանությունները կարծում են, որ ունեն բարոյական առավելություն, սակայն համաձայն միջազգային իավունքի, յուրաքանչյուր ոք ունի խոշտանգումներից և այլ դաժան վերաբերմունքի³⁵ պաշտպանվելու իրավունք:

Փաստաբան ունենալու իրավունքը ոչ պակաս կարևոր է, երբ անձին խնդրել են հետևել իշխանությունների ներկայացուցիչներին, նույնիսկ եթե նա ձերբակալված չի և մերժումը կարող է լինել տարբերակներից մեկը: Նման պայմաններում վտանգ կա, որ ազատագրվածը կարող է արժանանալ վատ վերաբերմունքի կամ ստիպված լինել ցուցմունք տալ իր կամ ուրիշների դեմ:

Քանի որ երբեք չի կարելի երաշխավորել, որ իշխանությունները (այդ թվում ոստիկանության, հետախուզական եւ անվտանգության աշխատակիցները) բոլոր դեպքերում կհարգեն փաստաբան ունենալու իրավունքը, համապատասխան երաշխիքները, ներառյալ իրավական աջակցության դիմելը, անհրաժեշտ են:

Գործնական տեսանկյունից փաստաբան ունենալու իրավունքի արդյունավետ իրականացումը ենթադրում է, որ ազատագրվածը պետք է տեսնի իր ընտրած օրինական ներկայացուցչին ազատագրվումից հետո որքան հնարավոր է շուտ: Մարդու իրավունքների հանձնաժողովը, իր 32րդ Ընդհանուր մեկնաբանության մեջ ասում է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14րդ հոդվածով ամրագրված փաստաբան ունենալու իրավունքը պահանջում է «իրավական աջակցության արագ տրամադրում մեղադրյալին»³⁶:

Համապատասխան տարածշրջանային մարմինները նույնպես համաձայնել են արագ փաստաբան տրամադրելու անհրաժեշտության հետ: Օրինակ, ՄԻԵԴ –ն

³¹ CCPR A/57/40 vol. I (2002) at § 82(13)

³² CCPR A/55/40 (2000) at § 108

³³ CCPR A/54/40 (1999) at § 83. These lists do not purport to be exhaustive; merely to show the widespread incidence of the problem, even in places which do (or might be expected to) have a right of access to counsel enshrined in legislation or procedural guidelines.

³⁴ See Report of UN Special Rapporteur on Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment to Commission of Human Rights of 23 December 2005 (E/CN.4/2006/6, available at: <http://www.un.org/Docs/journal/asp/ws.asp?m=E/CN.4/2006/6>).

³⁵ UN Convention against Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, article 2.

³⁶ See: <http://daccess-ods.un.org/access.nsf/Get?Open&DS=CCPR/C/GC/32&Lang=E> at §34.

Սալդուզը ընդդեմ Թուրքիայի³⁷ գործով ընդգծել է, որ դատավարությունը կարող է լինել համարվել անարդար հարցաքննության առաջին պահից, եթե փաստաբան ունենալու իրավունքը չի հարգվում:

Խոշտանգումների և այլ դաժան, անարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ Եվրոպական կոմիտեն (CPT) հրապարակել է հետեւյալ չափանիշները 1992թ.

Հանձնաժողովը առանձնապես կարևորում է ազատագրված անձանց երեք իրավունք, այն որ իր ձեռքբերված փաստի մասին տեղեկացվի երրորդ անձը իր ընտրությամբ (ընտանիքի անդամ, բարեկամ, հյուպատոսություն), փաստաբան ունենալու իրավունք, և բժշկական հետազոտության իրավունք: Նրանք, ըստ Խոշտանգումների դեմ Եվրոպական կոմիտեի, համարվում են 3 հիմնական երաշխիքները՝ կանխելու կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքը, որոնք պետք է կիրառվեն ազատագրված սկզբից, անկախ այն բանից, թե ինչպես այն կարող է նկարագրվել իրավական համակարգում (ձեռքբերվում, կալանք և այլն):³⁸

1996 թ – ին Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) հետագայում զարգացրեց իր տեսակետները այս թեմայի վերաբերյալ.

ԽԿԿ կցանկանար ընդգծել, որ, ըստ իր փորձի, ահաբեկման եւ ֆիզիկական բռնության ռիսկը մեծանում է անմիջապես ազատագրվումից հետո: Հետեւաբար, ոստիկանության կողմից կալանավորված անձի համար փաստաբան ունենալու հնարավորությունը այդ ժամանակահատվածում դառնում է դաժան վերաբերմունքը ազատվելու երաշխիք: Նման հնարավորության առկայությունը կարող է ունենալ տարհամոզիչ ազդեցություն նրանց համար, ովքեր վատ են վերաբերվում կալանավորված անձանց, բացի այդ, փաստաբանը ունի բոլոր հնարավորությունները ձեռնարկելու համապատասխան միջոցներ, եթե իրականում կա չարաշահում:³⁹

Վերջապես, 2002 թ - ին ԽԿԿ-ն նորացրեց Եվրոպայում այս երաշխիքի կարգավիճակը.

Փաստաբան ունենալու իրավունքը ոստիկանության կալանքի տակ գտնվելու ընթացքում այժմ լայնորեն ճանաչված է ԽԿԿ-ի կողմից այցելված երկրներում; այն քիչ երկրներում, որտեղ այդ իրավունքը չի գործում, նախատեսվում է ներկայացնել այն ⁴⁰:

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ իր երրորդ պարբերական զեկույցում ԽԿԿ-ն նշեց «ազատագրվածների՝ անմիջապես ազատագրված լինելուց հետո իրավաբանի, բժիշկի եւ ընտանիքի անդամների հետ շփման սահմանափակությունը⁴¹...»: 2008թ դեկտեմբերի 12-ի Ղազախստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումների ժամանակ, մասնավորապես, հանձնաժողովը առաջարկել է, որ:

Իշխանական կողմը պետք է անհապաղ միջոցներ իրականացնի, որպեսզի երաշխավորի, որ անձը չի ենթարկվի դե ֆակտո ճանաչված կալանավորման, և որ բոլոր ձեռքբերված

³⁷ See above, No23.

³⁸ CPT Standards Document – extracts of “substantive” sections of CPT reports, available at: <http://www.cpt.coe.int/en/documents/eng-standards.pdf> [Rev 2009] - extract from p 6 (emphasis added).

³⁹ As above, at p.8

⁴⁰ As above, at p.10

⁴¹ See Concluding Observations on Russia of 6 June 2002, CAT/C/CR/28/4, at § 6(c) (emphasis added).

կասկածյալներին տրամադրվելու են բոլոր հիմնարար իրավական երաշխիքները իրենց կալանքի ընթացքում: Նրանք ներառում են մասնավորապես իրենց ազատագրկման պահից փաստաբանի ծառայությունից օգտվելու իրավունք, ինչպես նաև տեղեկացված լինելը իրենց իրավունքներին մասին, այդ թվում՝ իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքների մասին, ինչպես նաև դատավորի առջև արագ հանդես գալու իրավունքը⁴²:

Աֆրիկայում Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ Մարդկանց և ազգերի իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի կողմից 2002թ –ին ընդունված Ռոբեն կղզու Ուղեցույցի 20-րդ կետը նույնպես ընդունում է փաստաբանի ներկայության իրավունքը ազատությունից զրկվելուց անմիջապես հետո⁴³:

2008 թվականի մարտին Մարդու իրավունքների ամերիկյան միջխորհրդարանական հանձնաժողովը ընդունել է մի շարք ուղեցույցներ «Ամերիկայում ազատագրկվածների պաշտպանության սկզբունքներ և լավագույն փորձը» խորագրով: Իրավաբանական պատշաճ ընթացակարգի մասին 5-րդ սկզբունքում կա հետևյալ պարբերությունը:

Ազատությունից զրկված բոլոր մարդիկ պաշտպանության եւ իրավախորհրդատուի կարիք ունեն՝ իրենց, իրենց ընտանիքների կամ Պետության կողմից կոչված: Նրանք իրենց փաստաբանի հետ գաղտնի շփվելու իրավունք ունեն առանց միջամտության կամ գրաքննության, առանց ձգձգումների կամ անհիմն ժամանակի, հենց ձերբակալման պահից և պարտադիր իրենց առաջին հայտարարության ժամանակ որևէ իրավասու մարմնի առաջ⁴⁴:

ՄԱԿ - ի Իրավաբանների⁴⁵ դերի մասին հիմնարար սկզբունքների 7րդ սկզբունքը առաջարկում է կոնկրետ ժամկետ:

Կառավարությունները պետք է նաև ապահովեն բոլոր ձերբակալված կամ կալանավորված անձանց (քրեական մեղադրանքով կամ ոչ) փաստաբանի ծառայություններով ոչ ուշ քան քառասունութ ժամվա ընթացքում ձերբակալման կամ կալանավորման պահից սկսած:

ՄԱԿ - ի Գլխավոր ասամբլեայի դեկտեմբերի 9-ի 43/173 որոշմանը կցված Ցանկացած տիպի կալանքի կամ ազատագրկման ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքների հավաքածուի 15-րդ սկզբունքը ամրապնդում է վերոնշյալը:

Չնայած 16-րդ սկզբունքի 4 - րդ պարբերության եւ 18 –սկզբունքի 3-րդ պարբերության բացառություններին, կալանավորի կամ ազատագրկվածի կապը արտաքին աշխարհի հետ, մասնավորապես՝ իր ընտանիքի կամ փաստաբանի հետ, չպետք է մերժվի ավելի քան մի քանի օր:⁴⁶

Սկսած 1990 թվականից, երբ այս կանոնները հրապարակվեցին, մեծ համաձայնություն մշակվեց այս ժամանակահատվածի վերաբերյալ: Այժմ, ընդհանուր առմամբ, համաձայնեցված է, որ նույնիսկ 48 ժամը հաճախ չափազանց

⁴² CAT C/KAZ/CO/2 (2008) at § 9 (Emphasis added)
⁴³ The Guidelines were annexed to the Resolution of the African Commission on Human and Peoples’ Rights on Guidelines and Measures for the Prohibition and Prevention of Torture, Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment in Africa of 23 October 2002 – see: http://www.achpr.org/english/resolutions/resolution66_en.html
⁴⁴ The text of the Principles is available on the Commission’s website at: <http://www.cidh.org/Basicos/English/Basic21.a.Principles and Best Practices PDL.htm> (emphasis added).
⁴⁵ See: <http://www2.ohchr.org/english/law/lawyers.htm>
⁴⁶ See: <http://www.un.org/documents/ga/res/43/a43r173.htm>. The exceptions mentioned relate to the “needs of the investigation” and the maintenance of “safety and good order”.

երկար է: Օրինակ, ՄԱԿ - ի Խոշտանգումների դեմ հատուկ զեկուցողը Մարդու իրավունքների հանձնաժողովին ուղղված իր զեկույցում (2003թ փետրվարի 27 թ.) առաջարկել է սահմանափակում 24 ժամով⁴⁷:

Բաժին V –ում ներկայացված են ազգային օրենսդրության մի քանի օրինակներ, որոնք ապահովում են փաստաբանի ծառայությունները հենց ազատազրկվելու պահից: Երկրմաստ ձևակերպումներ ունեցող երկրներում (ինչպես, օրինակ, Կանադա) ազգային դատարանները սահմանել են, որ «առանց ուշացման» արտահայտությունը նշանակում է այն պահից, երբ անձը ձերբակալվել է, նույնիսկ այն դեպքերում, երբ մեղադրանք դեռ չի առաջադրվել:

III. Ի՞նչ է «դիմելու» իրավունքը գործնականում

Անհրաժեշտ է, որպեսզի բանտարկյալին թույլատրվի հանդիպել իր փաստաբանի հետ նախքան իշխանությունների կողմից հարցաքննվելը: Հանդիպումը պետք է փակ լինի, որ ապահովի իրավաբան - հաճախորդ գաղտնիության պահպանումը, որը անկյունաքարն է բազմաթիվ իրավական համակարգերի՝ մասնավորապես քրեական գործերի ժամանակ:

Ինչպես հայտարարում է Մարդու իրավունքների հանձնաժողովը դատարանի առջև հավասարության իրավունքի և արդար դատաքննության մասին իր 32-րդ մեկնաբանությունում:

Փաստաբանի հետ շփվելու իրավունքը պահանջում է, որ մեղադրյալին ապահովեն փաստաբանով: Փաստաբանը պետք է կարողանա հանդիպել իր հաճախորդներին առանձին եւ մեղադրյալի հետ շփվել պայմաններում, որ ամբողջովին հարզվեն իրենց հաղորդակցության գաղտնիությունը: Բացի այդ, իրավաբանները պետք է կարողանան ներկայացնել մեղադրվող անձանց քրեական հանցագործությունը, համաձայն համընդհանուր մասնագիտական էթիկայի, առանց սահմանափակումների, ազդեցություն, ճնշման կամ անհարկի միջամտության ցանկացած կողմից⁴⁸:

ՄԱԿ – ի՝ Իրավաբանների դերի մասին հիմնարար սկզբունքը ապահովում է «քրեական դատավարության հատուկ երաշխիքներ», որից 5-ը և 8-ը ավելի շատ մանրամասներ են տալիս դիմելու իրավունքի վերաբերյալ:

Կառավարությունները պետք է ապահովեն, որ բոլոր մարդիկ անմիջապես տեղեկացվեն որևէ իրավասու մարմնի կողմից իրենց ընտրած փաստաբանի կողմից օգնություն ստանալու մասին ձերբակալման կամ քրեական հանցագործություն մեղադրանք ստանալու ժամանակ:

Բոլոր ձերբակալված, կալանավորված կամ բանտարկված անձինք պետք է տրամադրվեն համապատասխան հնարավորություններով, ժամանակով, որպեսզի տեսնեն և շփվեն իրավաբանի հետ, առանց ուշացման, խափանման կամ գրաքննության, և լրիվ գաղտնի: Նման խորհրդակցությունները կարող են լինել իրավապահ աշխատակիցների տեսողական, բայց ոչ լսողական դաշտում:

⁴⁷ E/CN.4/2003/68, at § 26(g), available at: http://ap.ohchr.org/documents/alldocs.aspx?doc_id=3360

⁴⁸ See: <http://daccess-ods.un.org/access.nsf/Get?Open&DS=CCPR/C/GC/32&Lang=E> at § 34.

Փաստաբանը պետք է նույնպես ներկա գտնվի քննության ընթացքում, հատկապես պատահական խոստովանությունների ժամանակ: Դատավորների ու իրավաբանների անկախության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը 1998 թվականին Հյուսիսային Իռլանդիայում իռլանդական հանրապետական բանակի ամրակայան այցելությունից հետո նշել է իր զեկույցում:

Հատուկ զեկուցողի պատկերացմամբ, փաստաբանի ներկայությունը ցանկալի է ոստիկանության հարցաքննության ընթացքում՝ որպես կարևոր երաշխիք մեղադրյալի իրավունքները պաշտպանելու համար: Իրավախորհրդատուի բացակայությունը հնարավոր չարաշահումների տեղիք է տալիս, հատկապես արտակարգ դեպքերում, որտեղ ավելի լուրջ հանցագործություններ են ներգրավված:⁴⁹

Միջազգային քրեական օրենքը ընդունում է հարցաքննության՝ անկախ դիտարկվելու անհրաժեշտությունը: Օրինակ, Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտի հոդված 55 (2)(դ) նախատեսում է, որ մարդը, որը կասկածվում է Դատարանի իրավասության մեջ գտնվող հանցագործության մեջ, պետք է իրավունք ունենա հարցաքննվելու փաստաբանի ներկայությամբ/էթե անձը կամովի չի հրաժարվում այս իրավունքից⁵⁰: Կան նման, թեև ավելի քիչ կոնկրետ երաշխիքներ Ռուանդայի⁵¹ Միջազգային քրեական դատարանների եւ նախկին Հարավսլավիայի ստատուտներում⁵²: Փաստաբանի ներկայության և արդար դատաքննություն ունենալու իրավունքի կապի մասին ներկայացված է Բաժին VI-ում:

Իշխանությունների համար պարզապես բավարար չէ իրավաբաններին թույլատրել ներկա գտնվել բանտերում: Եթե ազատագրվածը չունի որևէ փաստաբան, կամ չի կարող թույլ տալ իրեն, ապա պետությունը պետք է այդ պարտականությունները վերցնի իր վրա: Այդպիսի իրավաբան սովորաբար ընտրվում է տեղական համայնքի /կամ դրան հավասար մարմնի/ կողմից ներգրավված կամավորների շարքից. այս պարագայում գործում է Իրավաբանների դերի Հիմնական սզբունքներում ամրագրված 6-րդ կետը:

Փաստաբան չունեցող ցանկացած անձի դեպքում, այն բոլոր դեպքերում, երբ արդարադատության շահերը պահանջում են ունենալ փորձառու և հանցագործության բնույթի մասին իրազեկ փաստաբան, այն տրամադրվում է, որպեսզի ապահովի անվճար արդյունավետ իրավական օգնություն, եթե անձը չունի նման ծառայությունների համար բավարար միջոցներ:

ՄԱԿ – ի՝ բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի Ստանդարտ նվազագույն կանոնները⁵³ նույնպես անդրադառնում են այս հարցին: Կանոն 93-ը ապահովում՝

⁴⁹ E/CN.4/1998/39/Add.4, at § 47, available at:

<http://www.unhcr.org/refworld/category,REFERENCE,,GBR,3ae6b0ea8,0.html>

⁵⁰ Rome Statute of the International Criminal Court, A/CONF.183/9, available at: <http://www.icc-cpi.int/Menus/ICC/Legal+Texts+and+Tools/Official+Journal/Rome+Statute.htm>

⁵¹ See <http://www.icty.org/ENGLISH/basicdocs/statute.html> at article 20(4).

⁵² See http://www.icty.org/x/file/Legal%20Library/Statute/statute_sept08_en.pdf at article 21(4).

⁵³ See <http://www2.ohchr.org/english/law/pdf/treatmentprisoners.pdf>. The Rules were Adopted by the First United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, held at Geneva in 1955, and approved by the Economic and Social

Պաշտպանության նպատակներից ելնելով բանտարկյալին պետք է թույլ տալ օգտվել անվճար իրավաբանական օգնությունից, որտեղ հասանելի է նման օգնությունը, և ստանա փաստաբանի կողմից այցելություններ իր պաշտպանության և գաղտնի հրահանգներ ստանալու նպատակներով: Այս նպատակները ելնելով, ցանկության դեպքում այն պետք է լինի գրավոր: Բանտարկյալի եւ նրա փաստաբանի միջև հարցազրույցները պետք է լինեն տեսանելի սակայն ոչ լսելի դատական պաշտոնյայի կամ ոստիկանական գործակալի կողմից:

Կանոն 95 անդրադառնում է ձերբակալված կամ կալանավորված անձանց նմանատիպ անվճար պաշտպանությանը:

ՄԱԿ - ի Ցանկացած տիպի կալանքի կամ ազատագրկման ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքների հավաքածուի 17-րդ սկզբունքը նախատեսում է⁵⁴

1. Ձերբակալված անձը ունի իրավախորհրդատուի աջակցության իրավունք: Ձերբակալվածելուց անմիջապես հետո նա պետք է տեղեկացված լինի իր իրավունքի մասին իրավասու մարմնի կողմից, և նրան պետք է տրամադրվի համապատասխան միջոցներ այն իրականացնելու համար:
2. Եթե կալանավորված անձը չունի իր կողմից ընտրված փաստաբան և դրա համար բավարար միջոցներ, ապա բոլոր դեպքերում, երբ արդարադատության շահերը պահանջում են, դատական մարմնի կողմից նշանակվում է որևէ անվճար փաստաբան:

Դիմելու իրավունքը այս ենթատեքստում նշանակում է անձնական խորհրդատվություն՝ ապահովելու գործընթացին խստորեն հետևելն ու կալանավորի իրավունքների հանդեպ հարգանքի պահպանումը: Իշխանությունները պարտավոր են հեշտացնել սույն խորհրդատվությունը այնքան, որ վերացնեն այն խելամիտ պրակտիկայի:

IV. Արդյոք սա բացարձակ, թե սահմանափակման ոչ ենթակա իրավունք է?

Այս հատվածի նպատակն է բացահայտել, թե արդյոք գոյություն ունեն որևէ արդարացված սահմանափակումներ իրավաբանների մուտքի հանդեպ: Օրինակ՝ հնարավոր էն արդյոք սահմանափակումներ ազգային անվտանգության հիման վրա: Արդյոք նշանակություն ունի այն, թե կալանավորը հարցաքննվելու է, թե ուղղակի ոչ պաշտոնական հարցաքննման է ենթարկվելու: Ներքին իրավական շատ ռեժիմներ կիրառում են միանձնյա կալանք, օրինակ՝ երբ ընթացիկ հետաքննությունը կարող է վտանգի ենթարկվել, կամ երբ հասարակական անվտանգությունն է վտանգի տակ: Ինչնիցե, այսպիսի ռեժիմները բարձրացնում են վատ վերաբերմունքի և իրավունքների ոտնահարման այլ ձևերի գործոնը. այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խուսափել կամ զոնե խստորեն սահմանազծում կատարել:

Օրինական ներկայացուցչության պահպանման ամենավաղ միջազգային դրսևորումներն ամրագրված են Սկզբունքների հավաքածուի մեջ: 18-րդ սկզբունքն ասում է.

⁵⁴ See: <http://www2.ohchr.org/english/law/bodyprinciples.htm>

3. Կալանավորի կամ բանտարկյալի այն իրավունքը, որն է՝ այցելություններ ունենալ, խորհրդակցություն կատարել և հաղորդակցվել անհապաղ և առանց հետևողների և գաղտնիության ապահովմամբ իր իրավապաշտպանի հետ չպետք է սահմանափակվի կամ արգելվի՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք ամրագրված են օրենքով կամ օրինական կանոնակարգերով, երբ դա պարտադիր է համարվում դատական կամ այլ իրավական մարմնի կողմից՝ ապահովելու անվտանգությունն և սահմանված կարգը:

Սակայն այս կետը սահմանափակված է սույն փաստաթղթի 2-րդ Հատվածի 15-րդ սկզբունքով:

ՄԱԿ - ի Ցանկացած տիպի կալանքի կամ ազատազրկման ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքների հավաքածուն վերահաստատվել է 2009 թվականի դեկտեմբերին Գլխավոր ասամբլեայի 64/153⁵⁵ բանաձևի 19-20 պարբերություններում. Հիշեցնում է Ցանկացած տիպի կալանքի կամ ազատազրկման ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքների հավաքածուի վերաբերյալ իր դեկտեմբերի 9-ի 43/179 որոշումը, և այս համատեքստն ընդգծում է, որ ձերբակալված կամ կալանքի ենթարկված անհատը անմիջապես պետք է անձամբ ներկայանա դատավորին կամ դատական համակարգի այլ ներկայացուցչի, ունենա արագ և կանոնավոր բժշկական օգնություն և իրավախորհրդակցություն, ինչպես նաև ընտանիքի անդամների այցելության հնարավորություն, իսկ անկախ մոնիտորինգի մեխանիզմները շատ արդյունավետ միջոց են խոշտանգումների, և այլ դաժան, ոչ մարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխելու համար:

Հիշեցնում է բոլոր պետություններին, որ երկարաձգված մեկուսի ձերբակալությունները կամ ձերբակալումը գաղտնի վայրերում կարող է թույլ տալ խոշտանգումներ եւ այլ դաժան կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ և կարող է ինքնին վերածվել այդպիսի վերաբերմունքի, և պնդում է, որ բոլոր պետությունները պետք է հարգեն մարդկային ազատությանը, անվտանգության և արժանապատվության երաշխիքները, և պետք է վերացվեն գաղտնի վայրերում ձերբակալումները եւ հարցաքննությունները:

Այս բանաձևը, որը ընդունվել է փոխադարձ համաձայնությամբ, ցույց է տալիս, որ միջազգային հանրությունը եզրահանգել է, որ երկարաձգված մեկուսի և գաղտնի կալանավորումը չպետք է իրականացվի, նույնիսկ բացառիկ հանգամանքներում⁵⁶: ՄԻԵԴ-ը, Օջալանը ընդդեմ Թուրքիայի⁵⁷ գործում կարծում է, որ մարդը պետք է փաստաբանի իրավունք ունենա և կարողանա փորձել դիմակայել իր կալանավորմանը, և որ ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6 - րդ հոդվածի, որը ներկայացնում է արդար դատաքննության երաշխիքները, «որպես կանոն պահանջում է, որ ոստիկանական հարցաքննման նախնական փուլերում ձերբակալվածը կարողանա օգտվել իրավաբանի ծառայությունից»⁵⁸:

⁵⁵ տե՛ս: <http://www.un.org/ga/64/resolutions.shtml>

⁵⁶ The International Convention for the Protection of All Persons from Enforced Disappearance (not yet in force but also adopted by consensus by the UNGA on 20/12/2006) also prohibits secret detention in article 17(1).

⁵⁷ Application 46221/99. See also Murray v UK (Application 41/1994).

⁵⁸ *Öcalan v Turkey*, as above, judgment of the First Section (Chamber) of the ECtHR, 12 March 2003, at § 140. This passage was approved by the Grand Chamber on appeal, at § 131 of the Grand Chamber judgment of 12 May 2005.

«Սակայն», -ՄԻԵԴ շարունակում է, - «այդ իրավունքը, որը համաձայնագրում ուղղակիորեն սահմանված չէ, կարող է սահմանափակվել արդարացի պատճառներով: Ամեն գործում խնդիրը նրանում է, որ արդյոք սահմանափակումը զրկել է մեղադրյալին արդար դատավարություն ունենալուց»⁵⁹:

ՄԻԵԴ-ը վերահաստատել է և զարգացրել է Օջալանի գործով իր տեսակետը 2008 թ. Սալդուզնն ընդդեմ Թուրքիայի գործի⁶⁰: Դատարանը գտել է, որ արդար դատաքննության իրավունքը պահանջում է օգտվել փաստաբանի ծառայություններից առաջին հարցաքննության պահից, և ավելացրել է, որ նույնիսկ այնտեղ, որտեղ կան անհաղթահարելի պատճառներ այն նվազեցնելու. «պաշտպանության կողմի իրավունքները անդառնալի վնաս կկրեն, երբ ոստիկանության քննության ընթացքում արված հայտարարությունները՝ առանց փաստաբանի ներկայության, օգտագործվեն մեղադրանքի համար: Մա նշանակում է, որ իրավաբանի ծառայություններից օգտվելու իրավունքի չիրականացումը կամ ներպետական օրենքում այլ բացառությունները պարտադիր չէ արդարացնեն իշխանությունների՝ փաստաբան չտրամադրելու որոշումը, եթե հետագա համապատասխան բանավոր վկայության վրա հիմնվելը անարդար է բոլոր հանգամանքների տեսանկյունից»⁶¹:

Ինչ վերաբերում է բացառիկ հանգամանքներին, երբ արգելվում է փաստաբան ունենալու իրավունքը, ապա պետք է նշել, որ Մարդու իրավունքների կոմիտեն սահմանել է՝

Դա անբաժան մաս է կազմում այն իրավունքների պաշտպանությանը, որոնք 4 – րդ հոդվածի 2-րդ կետում հստակ ճանաչված են որպես ոչ ստորադասելի, ըստ որի նրանք պետք է ապահովվեն ընթացակարգային երաշխիքներով, այդ թվում, հաճախ, դատական երաշխիքներով: Ընթացակարգային երաշխիքներին վերաբերող Դաշնագրի պայմանները երբեք չեն կարող ենթակա լինել այնպիսի միջոցների, որոնք կշրջանցեն ոչ ստորադասելի իրավունքների պաշտպանությունը: 4-րդ հոդվածը չի կարող այնպես մեկնաբանվել, որ առաջ բերի որ ստորադասելի իրավունքների ստորադասում...⁶²:

Հետևելով այս պատճառաբանությանը, իրավաբանի ներկայության իրավունքը երբեք չպետք է արգելվի այն աստիճան, որ հանգեցնի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի խախտմանը:

Խոշտանգումների դեմ հատուկ զեկուցողը նաև անդրադարձավ անվտանգության նկատառումներից բխող սահմանափակումներին և առաջարկեց անդրադառնալ պետությանը վերաբերող առնվազն մեկ պարբերաբար կրկնվող խնդրին՝

Բացառիկ հանգամանքներում, երբ փաստաբանի հետ արագ կապը կարող է բարձրացնել իրական անվտանգության խնդիրներ, և երբ դատական կարգով նման սահմանափակումը

⁵⁹ See above, n 23

⁶⁰ See above, n 23

⁶¹ See also *Pishchalnikov v Russia* (Application 7025/04, Chamber judgment of 24 September 2009, in particular §§ 72-91), *Oleg Kolesnik v Ukraine* (Application 17551/02, Chamber judgment of 19 November 2009 § 35), and *Savaş v Turkey* (Application 9672/03 of 13 March 2006; Chamber judgment of 8 December 2009, in particular §§ 53-70).

⁶² See Human Rights Committee General Comment 29, § 15. The remainder of the paragraph gives an illustrative example related to the right to life (article 6).

հաստատված է, պետք է առնվազն հնարավորություն տալ հանդիպելու անկախ փաստաբանի հետ, օրինակ՝ իրավաբանների ընկերակցության կողմից առաջարկված:⁶³

Ընդհանուր շեշտադրումը այստեղ այն է, որ փաստաբանի ներկայությունը կարևոր միջոց է՝ ապահովելու պետության համապատասխանությունը մարդու իրավունքների այլ պարտականությունների հետ, որոնք վերաբերում են ձեռքարկվածներին, ներառյալ՝ պարտավորությունները ապահովելու արդար դատաքննություն և պաշտպանություն բոլոր տեսակի վատ վերաբերմունքից: Եթե փաստաբանի մուտքը մերժվում է, կամ անհարկի ձգձգվում, այդ պարտավորությունները խախտելու վտանգը ուժեղանում է:

V. Այս իրավունքը ամրապնդող ազգային օրենսդրություններ

Եվրոպա

Փաստաբան ունենալու իրավունքը առավել լավ է հիմնավորված Եվրոպայում: Եվրոպական քրեակատարողական օրենքներով նախատեսված է, որ բոլոր չդատված բանտարկյալները պետք է ինչպես հարկն է տեղեկացված լինեն իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրենց իրավունքի մասին⁶⁴:

Եվրոպայում այս իրավունքի ճանաչման վառ օրինակներից մեկն է ֆրանսիական «Քրեական Դատավարության օրենսգրքի 63(4) հոդվածը, որով նախատեսված է, որ այն պահից, երբ անձը ձերբակալվում է, նա ստանում է փաստաբանի⁶⁵ հետ համդիպման իրավունք: Այդ դրույթը, մեկնաբանված է վերոհիշյալ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայով(մասնավորապես՝ Սալդուզի գծով), գործածվեց 2009թ-ի հուլիս-նոյեմբերին, երբ դը՝ Բոբին գերագույն ատյանի դատաբանի վերահսկող դատավորները հրաժարվեցին շարունակել կալանքի տակ պահել այն անձանց, ովքեր կասկածվում են ծանր հանցագործության մեջ և ովքեր չէին հանդիպել փաստաբանների հետ⁶⁶: Գրելու ժամանակ ի հայտ եկան տարաձայնություններ Ֆրանսիայի սահամանադրության հետ կապված⁶⁷:

Համաձայն Շվեդիայի դատավարական օրենսգրքի 23-րդ գլխի 10-րդ հոդվածի, ցանկացած ձերբակալված անձ ոստիականությունում ցուցմունքներ տալու ժամանակ իրավունք ունի պահանջելու փաստաբան, նույնիսկ, նախնական հետաքննության ժամանակ, եթե դա չի խանգարում հետախուզությանը⁶⁸:

⁶³ 2003 Report to the Human Rights Commission – see above n 5.

⁶⁴ See Recommendation Rec(2006)2 of the Committee of Ministers, available at: <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=955747>.

⁶⁵ Unofficial translation – in the original, it is: *Dès le début de la garde à vue, la personne peut demander à s'entretenir avec un avocat*

⁶⁶ The Tribunal decisions are not published, but a copy of the decision of 30 November 2009 is available on the LeMonde.fr website: <http://combatsdroitshomme.blog.lemonde.fr/files/2009/12/decision-jld-bobigny-cedh.1259856473.pdf>. See further <http://www.abolir-gardeavue.fr> – the website of a campaign by Parisien barristers to reform the French system of “garde à vue” to include timely access to lawyers. Please note that this legal development is not without controversy – *Le Syndicat des Commissaires de la Police Nationale* (www.le-scpn.fr) issued a press release on 3 December 2009 deploring the prioritisation of European Human Rights law over French domestic law.

⁶⁷ See eg: <http://info.france2.fr/france/la-garde-a-vue-conforme-a-la-constitution--61451481.html>

⁶⁸ An (official) English translation of the Code is available at: <http://www.regeringen.se/content/1/c4/15/40/472970fc.pdf>

Ավարտելով իր առաքելությունը Շվեդիայում Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն ողջունեց հետևյալ դրույթը՝

Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն ողջունում է այս նոր դրույթը, քանզի այն այժմ թույլ է տալիս պահանջել փաստաբանի ներկայություն ձերբակալման առաջին իսկ պահից բոլոր այն անձանց, ովքեր պետք է մնան ոստիկանությունում: Այս դրույթը իր մեջ է ներառում նաև այն փաստը, որ ոստիկանությունում ցուցմունքներ տվող անձը պարտադիր չէ, որ կասկածյալ լինի, սակայն հետագայում կարող է դառնալ դրանցից մեկը: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն խորհուրդ է տալիս շվեդական ղեկավարությանը ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի այս նոր դրույթը արդյունավետ կիրառություն գտնի գործնականում, և այն անձինք, ովքեր կձերբակալվեն, պարբերաբար կտեղեկացվեն այդ իրավունքի մասին:⁶⁹

Հունական պատժիչ հաստատությունների մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 2րդ կետը երաշխավորում է ձերբակալված անձանց հանդիպումը փաստաբանի հետ⁷⁰: Քրեադատավարական օրենսգրքի 96-րդ հոդվածը ևս երաշխավորում է քրական պատասխանատության ենթարկվածների հաղորդակցումը իրենց փաստաբանների հետ⁷¹: 2003 թվականին Հունաստանի ոստիկանության պետը հրատարակեց հրամանագիր այն մասին, որ ամբողջ Հունաստանի ոստիկանությունը նույնպես պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին և թույլատրի փաստաբանին ազատ մուտք գործել բոլոր ձերբակալվածների մոտ (լինեն նրանք քրեական թե վարչական)⁷²:

Մեծ Բրիտանիայում գործում են գործնական կիրառման օրենսգրքեր 1984թ Ոստիկանական և քրեական վկայության ակտի համաձայն (PACE Act)⁷³, որը կիրառում է C նորմը, որը «ոստիկանության աշխատակիցների նկատմամբ պահանջներ է ներկայացնում՝ կասկածյալների (ահաբեկչության հետ կապ չունեցող) ձերբակալման և հարցաքննության հետ կապված»⁷⁴: Կանոնադրությունը նախատեսում է, որ «մասնավոր կարգով փաստաբանի հետ խորհրդակցությունը և ազատ անկախ իրավաբանական խորհրդակցությունը հասանելի է հսկողության տակ գտնվելու բոլոր փուլերում»⁷⁵: Ուշադրություն դարձնենք օրենսգրքի 1A կետին, որը սահմանում է, որ ոստիկանական բաժանմունք կամավոր ներկայացած անձինք (օրինակ վկաները) նույնպես ունեն իրավաբանական խորհրդատվություն ստանալու բացարձակ իրավունք:⁷⁶

Սակայն համաձայն PACE Act S 67(10)⁷⁷ - ի դրույթի սույն օրենսդրության խախտման համար որևէ պատասխատատվություն չի առաջանում, լինի քրեական կամ քաղաքացիական:

⁶⁹ See Report on the Visit of the UNSPT to Sweden, (CAT/OP/SWE/1, 10 September 2008), at § 56
⁷⁰ In the absence of a readily available translation of the code, see communique from Chief of Police Fotios Nasiakos of 4/7/03 on the treatment and rights of persons detained by Greek Police, available at: <http://www.unhcr.org/refworld/pdfid/426fa1f14.pdf>, at § 3(f).
⁷¹ As above at § 3(e).
⁷² As above.
⁷³ Available at: http://www.opsi.gov.uk/acts/acts1984/pdf/ukpga_19840060_en.pdf
⁷⁴ <http://police.homeoffice.gov.uk/operational-policing/powers-pace-codes/pace-code-intro/>
⁷⁵ As above, at p 9.
⁷⁶ As above, at p 5.
⁷⁷ See above, n 73.

Ալբանական քրեադատավարության օրենսգրքի 255 և 256 հոդվածները սահմանում են՝

Դատական ոստիկանության ներկայացուցիչները և աշխատակիցները, ովքեր իրականացրել են ձերբակալում, կալանավորում կամ տեղափոխել են կալանավորվածի, պետք է անհապաղ տեղեկացնեն այդ մասին այն տարածքի դատախազին, որտեղ տեղի է ունեցել ձերբակալումը կամ կալանավորումը: Նրանք պետք է բացատրեն կալանավորվածին կամ ձերբակալվածին, որ վերջիններս պարտավոր չեն որևէ հայտարարություն անել, իրավունք ունեն պաշտպան ընտրելու և անհապաղ տեղեկացնելու ընտրված կամ դատախազի կողմից տրամադրված պաշտպանին:

Դատախազը պետք է հարցաքննի անձանց ընտրված կամ նշանակված պաշտպանի ներկայությամբ: Նա պարտավոր է հայտնել կալանավորվածին կամ ձերբակալվածին վերջինիս հետաքննության տակ գտնվելու և հարցաքննության ենթարկվելու պատճառը՝ տեղեկություններ տալով իր մեղադրանքի և նույնիսկ աղբյուրների⁷⁸ մասին, եթե հետաքննությունը դրանից չի տուժի:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում կան հետևյալ երաշխիքները՝

Կասկածյալը իրավունք ունի ... օգտվել փաստաբանի խորհրդից(ծառայությունից) հանաձայն գործող օրենսգրքի հոդված 49-ի 2-րդ, 3-րդ կետերի և ունի մասնավոր և գաղտնի այցի իրավունք առաջին իսկ հարցաքննությունց առաջ:⁷⁹

Շատ եվրոպական քրեական օրենսգրքեր և սահմանադրություններ ունեն նույն երաշխիքները:⁸⁰

ԱՄԵՐԻԿԱ

Միացյալ Նահանգների Սահմանադրության⁸¹ վեցերորդ եւ տասնչորսերորդ... փոփոխություններ տեղի ունեցան, որպեսզի երաշխավորեն փաստաբան ունենալու իրավունքը անձի նկատմամբ դատական գործ հարուցվելու ընթացքում և հետո: Գերագույն դատարանը մեկանաբանել է սա՝ ընդունելու ձերբակալման ծանուցագիրը և հարցաքննությունը:⁸²

⁷⁸ See: <http://www.legislationline.org/download/action/download/id/1654/file/3e7ef0be7ad60ee6e16cbd8b63db.htm/preview> (English translation)

⁷⁹ Available at: <http://www.legislationline.org/download/action/download/id/1698/file/3a4a5e98a67c25d4fe5eb5170513.htm/preview> - see also articles 49(3)(3) and 92(4)

⁸⁰ Unofficial translations of these laws are available at: <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>. The other Codes containing pertinent protections include: Code of Criminal Procedure of the Azerbaijan Republic (article 85.2.3); Republika Srpska Criminal Procedure Code (articles 47(1) and 201(5)); Criminal Procedure Code of Bulgaria (article 97); Code of Criminal Procedure of Estonia (article 45); Criminal Procedure Code of the Former Yugoslav Republic of Macedonia (article 3); Criminal Procedure Code of the Republic of Moldova (article 17); Criminal Procedure Code of Montenegro (articles 5 and 13); Criminal Procedure Code of Norway (articles 96-8 and 107); Federal Criminal Procedure Code of Switzerland (article 35 – NB this grants a right to counsel only from the first detention hearing, which must be within 24 hours of initial detention); Criminal Procedure Code of Uzbekistan (article 49, as amended in 1999). Please note this list does not purport to be exhaustive – it includes only codes of which the author was able to find suitable translations

⁸¹ That is, the guarantees of legal assistance for defence of a criminal charge and due process on deprivation of liberty – see <http://www.archives.gov/exhibits/charters/constitution.html>

⁸² See *Brewer v Williams* 430 US 387 (1977), unofficially available at: http://www.law.cornell.edu/supct/html/historics/USSC_CR_0430_0387_ZO.html, at pp 398-9.

Կանադայի իրավունքների և ազատությունների խարտիայում ամրագրված է պաշտպան ունենալու «անհապաղ իրավունքը»⁸³: Կանադայի գերագույն դատարանը քննարկել է, թե արդյոք դա ունեցել է այլ իմաստ 2009թ-ի Սուբերուն ընդդեմ Թագուհու⁸⁴ գործի՝ առանց մեղադրանքի ձեռքարկված համատեքստում և եկել է այն եզրակացության, որ այդ իրավունքը գործում է անձի ձեռքարկված պահից, սահմանափակումներ կան միայն անձնական անվտանգության կամ օրենքով նախատեսված դեպքերում⁸⁵:

Մեքսիկայի 1917 թ. Սահմանադրությունը, փոփոխված, ապահովում է անձի՝ իրավական համապատասխան պաշտպանության իրավունքը, և անձը ձեռքարկված/կալանավորման պահից սկսած կարող է ընտրել իրավական աջակցության միջոց⁸⁶: Իրավաբան ունենալու փաստացի իրավունքը ավելի ուշ դիտարկվում է նույն պարբերության մեջ՝ որպես «դատավարության բոլոր փուլերում»⁸⁷:

Ինչպես Միացյալ Նահանգներում, կա որոշակի հակասություն, թե արդյոք սա նշանակում կալանքի պահից, թե ավելի ուշ⁸⁸:

Օվկիանիա

Նոր Զելանդիայի 1990թ Իրավունքների բիլլ ակտը սահմանում է՝

Բոլոր նրանք, ովքեր դատապարտված են կամ կալանավորված որևէ որոշմամբ, իրավունք ունեն խորհրդակցել կամ փաստաբան պահանջել և առանց ուշացման տեղեկանալ այդ իրավունքի մասին⁸⁹:

Նմանապես Կուկի կղզիների սահմանադրությունը ապահովում է՝

Ոչ մի որոշում չպետք է ընդունվի կամ կիրառվի, որը կարող է զրկել ձեռքարկված կամ կալանավորված որևէ անձի իր իրավունքից, որտեղ իրագործելի է, առանց ուշացման տրամադրել փաստաբան կամ հանձնարարել փաստաբանի գործել⁹⁰:

Աֆրիկա

Մադագասկարում 2008⁹¹ թ Խոշտանգումների դեմ օրենքի 4 - րդ հոդվածը ներառում է «ազատազրկման պահից անմիջապես հետո» կիրառվելիք մի քանի հիմնական երաշխիքներ, այդ թվում՝ «իրավաբանի խորհրդից կամ (ազատազրկվածի կողմից) ընտրված անձի օգնությունից օգտվելու իրավունքը»⁹²:

⁸³ At section 10(b) – see: [http://laws.justice.gc.ca/en/charter/under\("Legal Rights"\)](http://laws.justice.gc.ca/en/charter/under().

⁸⁴ 2009 SCC 33, unofficial full text available at: <http://scc.lexum.umontreal.ca/en/2009/2009scc33/2009scc33.html> (official summary also available at: <http://www.scc-csc.gc.ca/case-dossier/cms-sgd/sum-som-eng.aspx?cas=31912>).

⁸⁵ As above – see in particular § 2 of the majority judgment

⁸⁶ Unofficial translation – original reads: *Tendrá derecho a una defensa adecuada por abogado, al cual elegirá libremente incluso desde el momento de su detención* – article 20(B), § VIII – see: <http://www.diputados.gob.mx/LeyesBiblio/pdf/1.pdf>

⁸⁷ Unofficial translation – in the original: “...en todos los actos del proceso”.

⁸⁸ See Special Report entitled *Presumed Guilty: Criminal Justice and Human Rights in Mexico* – 24 Fordham Intl LJ (2000-01) 801 at 843

⁸⁹ At section s23(1)(b) – see: <http://www.legislation.govt.nz/act/public/1990/0109/latest/DLM224792.html>

⁹⁰ The text of the Constitution is available at: http://www.paclii.org/ck/legis/num_act/cotci327. A failure to avert to this right before conducting an interrogation led to a ruling of inadmissibility in *Police v Ngametua Tutakiau* [2001] Cook Islands Crim.

⁹¹ Formally *Loi #2008-008 of 25 June 2008 contre la torture et autres peines out traitements cruels, inhumains ou dégradants* – available at: <http://www.apl.ch/tld/Madagascar.pdf>

⁹² In the original: “...dès l’instant où intervient la privation de liberté d’une personne...”.

Հարավ Աֆրիկայի Սահմանադրության հոդված 35(2)(b)-ում նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալված է, այդ թվում, յուրաքանչյուր դատապարտված կալանավոր իրավունք ունի... ընտրել, խորհրդակցել փաստաբանի հետ եւ տեղեկացված լինել այս իրավունքի մասին հնարավորինս շուտ⁹³:

Նույն կերպ, Գանայի Հանրապետության Սահմանադրության 14(2) բաժինը ապահովում է. «Այն անձը, ով ձերբակալվել է, սահմանափակվել իր ազատության մեջ կամ կալանավորվել տեղեկացվում է անհապաղ; այն լեզվով, որը նա հասկանում է իր ձերբակալման պատճառների մասին և իր իրավաբանի ընտրության իրավունքի մասին»:

Այլ

Կան բազմաթիվ ազգային օրենսդրության նման երաշխիքների այլ օրինակներ, որոնց համապարփակ լուսաբանումը դուրս է սույն հոդվածի շրջանակից: Այնուամենայնիվ, վերոնշյալ օրինակները պատշաճ կերպով ցույց են տալիս ազատագրվման ժամանակ փաստաբան ունենալու իրավունքի ճանաչումը, նույնիսկ եթե տարբեր երկրներ ընտրել են այն բնութագրելու տարբեր ձևեր:

Առաջարկվող մոտեցումը

Վերոնշյալ ազգային օրենսդրությունների մեծամասնության մեկ կարևոր խնդիրը այն է, որ նրանք կապում են փաստաբան ունենալու իրավունքը քրեական դատավարության հետ՝ այդպիսով սահմանափակելով այն կասկածյալների նկատմամբ: Սակայն, խոշտանգումների, մարդու իրավունքների չարաշահումների և այլ խախտումների դեմ մի ամբողջական պաշտպանություն ստեղծելու համար իրավաբան ունենալու իրավունքը պետք է հասանելի լինի յուրաքանչյուրին, այդ թվում նրանց, ովքեր գրկվել են իրենց ազատությունից կամ նրանց, ովքեր պահվում են վարչական կալանքի⁹⁴ տակ, ներառյալ վկաներին և իշխանությունների համար «հետաքրքրության առարկա» դարձած անձանց: Այդ պատճառով, իդեալական մոտեցումը պետք է լինի այն, որ այդ երաշխիքը ընդգրկվի համընդհանուր կիրառման իրավունքների Բիլլում:

VI. Հարակից իրավունքներ

Բացի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7 - րդ, և ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 2 - րդ եւ 16 հոդվածների (եւ խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի դեմ պատշաճ կերպով սահմանված այլ

⁹³ <http://www.info.gov.za/documents/constitution/1996/a108-96.pdf>

⁹⁴ Support for this proposition may be found in the Body of Principles (See above, n 54. The definition of “detainee” is not restricted to criminal cases, and in Resolution 1993/36 on the question of arbitrary detention, the former UN Commission on Human Rights specifically stated that the Body of Principles covers administrative detention [See: <http://www.unhcr.ch/Huridocda/Huridoca.nsf/TestFrame/fe59d64a20ec7117c1256a8400459c75?Opendocument> at PP6]). The Standard Minimum Rules (see above, n 53) also extend to persons arrested or detained without charge (see rule 95), and the CPT Standards refer to access to a lawyer for irregular migrants detained administratively [Rev 2009, at p 50 – see above, n 38].

արգելքների⁹⁵), փաստաբանի ծառայությունից օգտվելու երաշխիքը կապված է կամայական ձերբակալման կամ կալանավորման միջազգային օրենքի արգելքների հետ, որոնք ամրագրված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9(1) հոդվածում⁹⁶: Հոդված 9(3) և 9(4) նույնպես դրան են վերաբերում: Նախնական լսումների համար դատարանի առջև հանդես գալը⁹⁷ և անձի կալանքի իրավական լինելու փաստի ստուգումը (habeas corpus) խոշտանգումներից և այլ դաժան վերաբերմունքի դեմ կարևորագույն երաշխիքներից են: ՄԱԿ - ի Գլխավոր ասամբլեան իր 34/178 բանաձևում նշում է՝

Համարում է, որ այդ գործիքների օգտագործումը կարող է նաև կանխել իշխանավորների կողմից ձերբակալվածների նկատմամբ խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի միջոցների ... իրականացման հնարավորությունը⁹⁸:

Չնայած նրանք պատշաճ կերպով սահմանված են միջազգային իրավունքում, այդ իրավունքների հանդեպ հարգանքը հեռու է համընդհանուրից, և այս վիճակը չի բարելավվի, մինչև կալանավորները չունենան որակյալ իրավաբանական ներկայացուցչության (ծառայության) հնարավորություն:

Ի հավելումն, ինչպես արդեն նշվել է, այս իրավունքի և քրեական դատավարության ժամանակ պատշաճ իրավական ներկայացման իրավունքի միջև համընկման եզրեր կան⁹⁹: Չնայած սույն փաստաթուղթը կենտրոնանում է փաստաբանների ծառայությունից օգտվելու՝ ավելի շատ որպես վատ վերաբերմունքի դեմ երաշխիքի, քան գուտ արդար դատաքննության երաշխիքի, ակնհայտ է դառնում, որ առանց դատապաշտպանի հարցաքննության ընթացքում ձեռք բերված վնաս պատճառող վկայությունները կարող են ի վերջո հանգեցնել անարդար վճռի¹⁰⁰:

Եզրակացություն

Փաստաբան ունենալու իրավունքը՝ սատարված կալանավորող իշխանությունների համագործակցությամբ, կենսական նշանակություն ունի ՄԱԿ - ի Խոշտանգումների դեմ Կոնվենցիայի 2 -րդ և 16 –րդ հոդվածների պատշաճ կատարման համար (կանխարգելու պարտականություն), ինչպես նաև նվազեցնում

⁹⁵ See eg article 3 of the European Convention on Human Rights (available at: <http://www.echr.coe.int/NR/rdonlyres/D5CC24A7-DC13-4318-B457-5C9014916D7A/0/EnglishAnglais.pdf>), article 5 of the American Convention on Human Rights (available at: <http://www.cidh.org/Basicos/English/Basic3.American%20Convention.htm>), or article 5 of the African (Banjul) Charter on Human and Peoples' Rights (available at: <http://www.africa-union.org/root/au/Documents/Treaties/Text/Banjul%20Charter.pdf>)

⁹⁶ See eg article 9 of the International Covenant on Civil and Political Rights; article 5 of the European Convention on Human Rights, article 7 of the American Convention on Human Rights, or article 6 of the African Charter on Human and Peoples' Rights

⁹⁷ In General Comment 8, the HRC states: “Paragraph 3 of article 9 requires that in criminal cases any person arrested or detained has to be brought “promptly” before a judge or other officer authorised by law to exercise judicial power. More precise time-limits are fixed by law in most States parties and, in the view of the Committee, delays must not exceed a few days.”

⁹⁸ See: <http://www.un.org/documents/ga/res/34/a34res178.pdf> at § 2. “Those remedies” refers to *amparo*, *habeas corpus* or other legal remedies to the same effect (see § 1)

⁹⁹ See eg article 14 of the International Covenant on Civil and Political Rights; article 6 of the European Convention on Human Rights, article 8 of the American Convention on Human Rights, or article 7 of the African Charter on Human and Peoples' Rights.

¹⁰⁰ See eg *Salduz v Turkey*, above n 23 – in particular § 55 of the Grand Chamber judgment of 27 November 2008.


Է մարդու իրավունքների խախտումները: Այն երկրներում, որտեղ դատական վերահսկողությունը սահմանափակված է իշխանությունների կողմից, անկախ իրավաբանների դերը ավելի է կարևորվում:

Այդ իսկ պատճառով խստորեն խորհուրդ է տրվում ցանկացած այն կառավարությանը, որը չունի այդ իրավունքը ամրագրված իր ազգային օրենսդրությունում, հաշվի առնել այդ երաշխիքի հետևյալ հիմնական տարրերը՝

- Այն պետք է կիրառվի ազատագրկման ամենասկզբից, կամ, ամեն դեպքում, նախքան որևէ հարցաքննություն սկսելը
- Այն պետք է կիրառվի իր կամքին հակառակ կալանավորված ցանկացած անձի նկատմամբ, ոչ միայն հանցագործության մեջ կասկածվողների հանդեպ
- Բանտարկյալը պետք է անսահմանափակ մասնավոր հանդիպում ունենա իրավաբանի հետ, և հետևյալ դրույթները պետք է ներառվեն համապատասխան օրենսդրության մեջ
- Փաստաբանների հետ շփումը արգելող իշխանությունների ներկայացուցիչների համար նախատեսված կարգապահական կանոններ
- Երաշխիքը չհարգելու պայմաններում ձեռք բերված ցանկացած վկայության անընդունելիություն

Փաստաբանի փաստացի առկայության ապահովումը ցանկացած հարցազրույցի կամ հարցաքննության ընթացքում հետագայում հնարավորինս կնվազեցնի խախտումները և կբարձրացնի պաշտպանության մակարդակը:

Ազգային օրենսդրությունում առկա փաստաբան ունենալու իրավունքը, որում բացակայում է այս կարևոր բաղադրիչներից մեկը, պետք է վերանայվի:



Association for the Prevention of Torture - APT
Route de Ferney 10 P.O. Box 2267
CH - 1211 Geneva 2
Tel (+41 22) 919 2170 Fax: (+41 22) 919 2180
e-mail: apt@apt.ch Internet: www.apt.ch